ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/10

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Բողոքաբեր՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Ա. Գրիգորյանի, Հ. Ենգոյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ Ա. Չերքեզյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցում, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից)

կողմից 04.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել 20.01.2020թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացրած «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և վերանայել բանակցությունների արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին նույն արձանագրության 7-րդ կետով կայացրած որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 04.02.2020թ.-ին և 05.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 06.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2020թ.-ին:

2. <u>«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ն 04.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 15.01.2020թ.:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգով ներկայացրած հայտով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

Չափաբաժին ների համար ները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/		Շահույթ /տառերով և թվերով/		ԱԱՀ** /տառերով և թվերով/		Ընդհանուր գինը /տառերով և թվերով/	
	2	*3*		*4*		*5*		*6=3+4+5*	
1	Ավտոմե քենաների վերանորոգման ծառայություններ	Իննսունվեց միլիոն	96,000,000	Ութսունվեց միլիոն չորս հարյուր հազար	86,400,000	Երեսունվեց միլիոն չորս հարյուր ութսուն հազար	36,480,000	Երկու հարյուր տասնութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար	218,880,000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 20.01.2020թ. թվագրված նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ 27.12.2019թ. ժամը 10:30-ին «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն, «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն և «ՋԻԷՆՋԵՅՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունները սկսվելուց առաջ ներկա մասնակիցներին ծանուցվել է, որ գնային առաջարկի նվազեցումները՝ համաձայն հրավերի 5.1 կետի պահանջների իրականացվելու են առավելագույնը մինչև ինքնարժեք նվազեցում, այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող վերջնական գինն առանց ԱԱՀ պետք է պակաս չլինի իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրության այս դրույթն անընդունելի էր և վերջինս իր կողմից գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացված ինքնարժեքից ցածր գնային առաջարկով: Հիմք ընդունելով «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1 կետի պահանջները և հաշվի առնելով, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և տվյալ գնման ընթացակարգի հրավերի պահանջը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել վերջինիս հայտը:

Բանակցությունների ընթացքում «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ նվազեցրած գնային առաջարկը (կցվում է).

Չափաբաժին ների համար ները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
Ավտոմե քենաների վերանորոգման ծառայություններ	85, 454, 545		112,800, 000

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի.

- հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում՝ դրա փոխարժեքը.

- նշում է այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի, ներառում է

փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Նույն հրավերի 5.2. կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Նույն հրավերի 5.3. կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրա-պետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Նույն հրավերի 8.1. կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն հրավերի 8.4. կետի համաձայն՝ ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Նույն հրավերի 8.7 կետի «դ» պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Ինչպես արդեն հայտնել ենք, բանակցությունների ընթացքում «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացրած ինքնարժեքից ցածր գնային առաջարկով: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 5.1. կետի պահանջները (առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից) և հաշվի առնելով, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից, իբրև թե խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և տվյալ գնման ընթացակարգի հրավերի պահանջը, որոշում է կայացվել մերժել վերջինիս հայտը:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացրած որոշումը իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես արդեն նշել ենք, «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է Հրավերի 5.1 կետի հիման վրա, որի համաձայն. «Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով»: Փաստորեն ըստ գնահատող հանձնաժողովի, քանի որ գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացրած ինքնարժեքից ցածր գնային առաջարկով, դրանով իսկ խախտվել է Ընթացակարգի հրավերի 5.1. կետի պահանջները: Գտնում ենք, որ նշված հիմնավորումը իրավաչափ չէ մի քանի հանգամանքներով պայմանավորված.

Նախ, Հրավերի 5.1. կետի, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածի պահանջները պետք է մեկնաբանվեն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, որը հստակ սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից և ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից: Մինչդեռ Հրավերի 5.1. կետը, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածը հստակ ամրագրում են, որ այստեղ խոսքը գնում է հայտով ներկայացրած գնային առաջարկի մասին: Ուստի վերոհիշյալ նորմերը չեն կարող վերաբերել բանակցությունների ընթացքում գների նվազեցման հարաբերությունների կարգավորմանը, առավել ևս հիմք հանդիսանալ հայտը մերժելու համար: Չէ որ Օրենքի 34-րդ հոդվածը հստակ ամրագրում է, որ հայտերը

գնահատվում են անբավարար և մերժվում են, եթե հակասում են հրավերի պահանջներին: Իսկ տվյալ դեպքում հրավերի 5.1. կետը ամրագրում է հայտով ներկայացվող գնային առաջարկին ներկայացվող պահանջներ, ինչի, բնականաբար, հիմք չի կարող հանդիսանալ գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների փուլում մասնակցի դրսևորված վարքագծի արդյունքում մասնակցությունը դադարեցնելու համար:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք ուսումնասիրել Հրավերի 5.1 կետի շարադասությունը: Մասնավորապես, 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Եթե ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներով, փորձենք այս նորմը տառացի մեկնաբանել, ապա կստացվի հետևյալը. «Առաջարկվող գինը պետք է պակաս չլինի փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերի ինքնարժեքից»:

Ընթացակարգի հրավերի 8.7 կետը մանրակրկիտ կարգավորում է բանակցությունների ընթացքը: Մասնավորապես, այս կետի «դ» պարբերությունը (այդ թվում նաև նույնաբովանդակ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ» պարբերությունը) ամրագրում է հետևյալը. «մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը»: Ինչպես հայտնի է, գնումների մասին ՀՀ օրենսդրությունը հստակ ամրագրում է, որ գնային առաջարկը մեկ միասնական փաստաթուղթ է, որը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ավելին, եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Վերոհիշյալը հստակ ապացուցում է, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը ամբողջությամբ՝ ներառյալ ինքնարժեքը, քանի որ հրավերը և գնումների մասին ՀՀ օրենսդրությունը այս մասով այլ բան չեն նախատեսում, ավելին, ուղղակիորեն թույլատրում են մասնակցին վերանայել իր ամբողջ գնային առաջարկը:

Գտնում ենք, որ Օրենքի 28-րդ հոդվածի կարգավորումը բանակցությունների փուլի վրա տարածելիս՝ պետք է նույնպես կիրառել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները հետևյալ մասով. նորմատիվ իրավական ակտի նորմը

մեկնաբանվում է՝ հաշվի առնելով տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքները: Ինչպես հայտնի է, Օրենքի 3-րդ հոդվածը հաստակ ամրագրում է գնումների գործընթացի սկզբունքները: Ըստ այդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Մինչդեռ եթե բանակցությունների ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվում, որպեսզի մասնակիցը հայտով իր ներկայացրած ինքնարժեքից ավելի ցածր ինքնարժեք ներկայացնի, ավելին, անհասկանալիորեն այդ հիմքով հայտը մերժում է, ապա պետությունը կզրկվի գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման հնարավորությունից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ տեսականորեն հնարավոր է, որ հայտը ներկայացնելու փուլում մասնակիցը հնարավոր է բանակցելով մեկ մատակարարի հետ և ճշտելով գները, ներկայացնի գնային առաջարկ՝ համապատասխան ինքնարժեքով, իսկ բանակցություններից առաջ կապ հաստատելով մեկ այլ մատակարարի հետ՝ ստանա ավելի ցածր ինքնարժեք: Ուստի նաև այս հիմնավորմամբ տրամաբանական է, որ մասնակիցը պետք է ունենա հնարավորություն բանակցությունների փուլում ներկայացնելու հայտով ներկայացրած գնային առաջարկի ինքնարժեքից ավելի ցածր գնային առաջարկ, ինչը թե՛ հրավերը և թե՛ գնումների մասին ՀՀ օրենդրությունը բանակցությունների փուլում չեն արգելում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև մեկ այլ, մեր տեսակետից տարօրինակ հանգամանք. «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների փուլում ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ներկայացնելը ՀՀ ոստիկանության կողմից դիտարկվել է որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և հիմքերը Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պաշտոնական ընթացակարգ

նախաձեռնելու և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնահատող հանձնա¬ժողովի հայտերի բացման նիստի արձանա-գրությունը թվագրված է 20.01.2020թ. ամսաթվով, մինչդեռ հայտերի բացումը տեղի է ունեցել 15.01.2020թ.: Վերոհիշյալի արդյունքում ստացվում է, որ հայտերի բացման նիստը սխալ ամսաթվով է հրավիրվել, քանի որ հայտերի բացումը, ըստ Ընթացակարգի հրավերի, պետք է տեղի ունենար 15.01.2020թ., սակայն հայտերի բացման նիստի արձանագրությունը թվագրված է 20.01.2020թ.: Ակնհայտ է, որ հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է թվագրված լիներ 15.01.2020թ., քանի որ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Միևնույն ժամանակ 20.01.2020թ. թիվ 2 արձանագրությամբ թյուրիմացաբար նշվել է, որ գների միաժամանակյա բանակցությունները իբրև թե տեղի են ունեցել 27.12.2019թ., չնայած ակնհայտ է, որ այն մրցույթով, որով հայտերի բացումը տեղի է ունեցել միայն 15.01.2020թ., բանակցությունները չէին կարող տեղի ունենալ 27.12.2019թ.: Այնուամենայնիվ, արձանա-գրությունը չի պարունակում որևէ տեղեկատվություն միաժամանակյա բանակցությունների անցկացման իրական ամսաթվի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնահատող հանձնաժողովը սխալ է կիրառել Օրենքի 28-րդ հոդվածը և հրավերի 5.1. կետը, ինչը հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև 34-րդ հոդվածի պահանջների խախտմանը, ինչը խոչընդոտ է հանդիսացել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման համար:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերացնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրությունը և պարտավորեցնել նույն ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 05.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ հնարավորություն տալով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.01.2019թ.-ին հրապարակվել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31 ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որտեղ վրիպակի պատճառով ծածկագիրը նշվել է գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր, իսկ ամբողջ հրավերը կազմված է որպես հրատապ բաց մրցույթ: Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 15.01.2020թ.-ին: Հայտերի բացման և գնահատման արձանագրությունը կազմվել է 20.01.2020թ.-ին՝ անմիջապես բանակցություններից հետո:

Ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված հրավերի օրինակելի ձևի վերջին փոփոխություններով, որն իրենից ենթադրում է այսպես ասած միափուլ մրցույթ, այսինքն, մասնակցի որակավորումը գնատահվում է հայտերի բացման նիստի ժամանակ: Այսպիսով ոչ գնային պայմաններով բավարար գնահատված մասնակիցները հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների /հիմք Ընթացակարգի հրավերի 8.7 կետի Բ ենթակետ/:

Բանակցությունների ժամանակ ներկա բոլոր մասնակիցները տեղեկացվել են, որ հրավերի 5.1 կետի և գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, այսինքն՝ բանակցությունների ժամանակ գնային առաջարկի նվազեցումներն իրականացվելու են առավելագույնը մինչև հայտով ներկայացված ինքնարժեք: Սակայն Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկները նվազեցվել են հայտով ներկայացված գնային առաջարկից կրկնակի անգամ ավել /164,640,000 ՀՀ դրամով/, որը 17,090,909 ՀՀ դրամով ցածր է իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկից: Ձեր ուշադրությանն եմ հրավիրում բողոքաբերի բողոքում նշված այն կետին, որ հրավերի 8.7 կետի դ պարբերության համաձայն մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ պարբերության պահանջների համաձայն յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակող բառերի և տառերի արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Քանի որ Ընթացակարգի հրավերի օրինակելի ձևով գնային առաջարկը պահանջվում է ներկայացնել ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, ուստի այս պարագայում մասնակցի կողմից ներկայացված հայտով բացահայտվում է գնման առարկայի ինքնարժեքը: Պատվիրատուն որպես հիմք ընդունում է մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի հաշվարկը, քանի որ գնումների մասին

ՀՀ օրենսդրությունը թույլ չի տալիս մասնակցից պահանջել այլ փաստաթղթեր, որոնցով կներկայացվի ինքնարժեքի հաշվարկը: Ուստի որպես գնման առարկայի ինքնարժեք ընդունվում է հայտով ներկայացված գինը: Բացի դա յուրաքանչյուր մասնակից, հրավերին մասնակցելուց առաջ, արդեն իսկ պետք է իմանա թե ում հետ է համագործակցելու, քանի որ ընթացակարգի հրավերով սահմանված են հստակ պահանջներ, որոնք դրված են ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ժամանակ օգտագործվող և անհրաժեշտ պահեստամասերի համար:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու միայն մեկ հայտ, որն իր մեջ բացի մյուս պահանջվող փաստաթղթերից ներառում է թվով մեկ գնային առաջարկ: Իսկ ինքնարժեք փոխելուց փոխվում է նաև տվյալ մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկը, փաստացի ստացվում է որ մասնակիցը հայտով երկու գնային առաջարկ է ներկայացնում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված 21.01.2020թ.-ին և 05.02.2020թ-ին հարցումները /կցվում են, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված բանավոր հարցման արդյունքում հստակ պարզաբանումն այս հարցի վերաբերյալ ևս մեկ անգամ հստակեցնում է այն փաստը, որ գնային առաջարկի նվազեցումներ կատարվում են միայն շահույթից:

Ինչ վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, այն է օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, միշտ չէ, որ ցածր գինը գրավական է արյդունավետության և օգտավետության: Ասեմ ավելին, որքան ցածր է մասնակցի գնային առաջարկը, նույն համարժեքությամբ նրա կողմից մատուցվող ծառայությունները դառնում են անորակ, ինչի հետևանքով վատնվում են շատ ավելի շատ միջոցներ, քան միջին գնային առաջարկի պարագայում:

Ճիշտ է Ընթացակարգի համար կազմվել է մեկ արձանագրություն, սակայն գտնում ենք, որ տվյալ բողոքի շրջանակներում բողոքաբերի կողմից դրա մատնշումը իրավաչափ չէ, քանի որ դրանով չի ոտնահարվել բողոքաբերի իրավունքները, ինչպես նաև դա նրա քննարկման առարկան չէ հատկապես այն պարագայում, որ բողոքի առարկայի հետ կապ չունի:

Բողոքարկման նիստի ժամանակ Գարանտսերվիս ՍՊԸ-ին տրվել հարց բողոքը քննող անձի կողմից, հարցի բովանդակությունը հետևյալն էր.

Արյդոք միայն գնային առաջարկով ներկայացված շահույթից նվազեցում կատարելով Գարանտսերվիս ՍՊԸ-ն չէր զբաղեցնի առաջին տեղ:

Գարանտսերվիս ՍՊԸ-ի ներկայացուցիչը պատասխանեց, որ ոչ, նրանց գնային առաջարկը դեռևս մնում էր բարձր, ինչի պատճառով նրա կողմից կատարվել է հայտով ներկայացված ինքնարժեքից ցածր նվազեցում: Այսպիսով մասնակիցը դեմպինգի ենթարկելով գնման առարկայի գինը և խախտելով ՏՄՊՊՀ օրենսդրության պահանջները, որով արգելվում է դեմպինգ իրականացնել, իր գնային առաջարկը նվազեցրել է ինքնարժեքից:

ՀՀ ոստիկանությունը գտնում է, որ ընթացակարգի շրջանակներում պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները, չեն ոտնահարվել ոչ մեկի իրավունքները և խնդրում է չբավարարել Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն:

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	96 000 000	86 400 000	36 480 000	218 000 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում հրավիրվել են բանակցություններ: Բանակցությունները սկսվելուց առաջ ներկա մասնակիցներին ծանուցվել է, որ գնային առաջարկի նվազեցումները՝ համաձայն հրավերի 5.1-րդ կետի պահանջների իրականացվելու են առավելագույնը մինչև ինքնարժեքի նվացեցում, այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող վերջնական գինն առանց ԱԱՀ պետք է պակաս չլինի իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրության այս դրույթն անընդունելի էր և վերջինս իր կողմից գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացված ինքնարժեքից ցածր գնային առաջարկով:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1-րդ կետի պահանջները և հաշվի առնելով, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և ընթացակարգի հրավերի պահանջը, Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը:

Բանակցությունների արդյունքում՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	85 454 545	8 545 455	18 800 000	112 800 000

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման,

ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացած «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ՝ հայտնելով, որ ուսումնասիրելով «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	96 000 000	86 400 000	36 480 000	218 000 000

Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում հրավիրվել են բանակցություններ: Բանակցությունները սկսվելուց առաջ ներկա մասնակիցները ծանուցվել են, որ գնային առաջարկի նվազեցումները՝ համաձայն հրավերի 5.1-րդ կետի պահանջների իրականացվելու են

առավելագույնը մինչև ինքնարժեքի նվազեցմամբ, այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող վերջնական գինն առանց ԱԱՀ պետք է պակաս չլինի իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրության այս դրույթն անընդունելի էր և վերջինս իր կողմից գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացված ինքնարժեքից ցածր գնային առաջարկով:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1-րդ կետի պահանջները և հաշվի առնելով, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և ընթացակարգի հրավերի պահանջը, Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը:

Բանակցությունների արդյունքում՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	85 454 545	8 545 455	18 800 000	112 800 000

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 96 000 000 ՀՀ դրամ: Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 94 000 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը

Հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակցի ներկայացրած հայտը:

Հակառակ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ կխախտվեն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-31» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ, ապահովելով մասնակիցների հավասար իրավունքներն՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և Հրավերի 5.1-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/10 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ